ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 25-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 17-րդ հոդվածի դրույթներով՝ .

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2020թ-ի հոկտեմբերի 15-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2020թ-ի հոկտեմբերի 15-ի թիվ 09 արտահերթ նիստի

1. Շահումյան համայնքի բյուջեի կատարման 2020թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 26-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2020Թ-Ի III ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Ընդունել ի գիտություն Շահումյան համայնքի 2020թ-ի բյուջեի 9 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը:

Կողմ - Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
Շահումյան համայնքի ավագանու
«15» հոկտեմբեր 2020թ. N -26Ա որոշման

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Շահումյան համայնքի 2020թվականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է՝.
Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 55743.4 հազար դրամ ծրագրված (ճշտված) 67996.5 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 82.0%: Ընդ որում՝ Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի վարչական մասով ծրագրված (ճշտված) 58654.1 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 55743.4 հազար դրամ՝ ապահովելով 95.0 % կատարողական: Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 17042.0 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 8204.2 հազար դրամ կամ 48.1 %: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է գանձվել 2019 թվականի համապատասխան ցուցանիշից 7.2 հազար դրամով
Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 46720.7 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 68.7 %-ը:
Հարկ է նշել, որ 2020 թվականի երրորդ եռամսյակի ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:
Ստորև ներկայացվում է Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Հարկեր և տուրքեր.

- Գույքահարկի գծով երրորդ եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 4124.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 5600.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 73.7 %, որը 2019 թվականի փաստացի ցուցանիշից պակասէ գանձվել 500.6 հազար
դրամով:

Հողի հարկի գծով երրորդ եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 1458.4 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 2226.9 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 65.5 %, որը 2019 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է գանձվել 286.9 հազար
դրամով:

Տեղական տուրքերի գծով երրորդ եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 223.5 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 157.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 141.9%, որը 2019 թվականի փաստացի ցուցանիշից ավել է գանձվել 81.5 հազար դրամով:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով երկրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 47539.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 47509.7 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է

100.0%: Պաշտոնական դրամաշնորհների մասով երրորդ եռամսյակի ծախսերը կազմել են 15015.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 18200.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 82.5 %:

Այլ եկամուտներ.

Շահումյան համայնքի 2020 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի այլ եկամուտների գծով նախատեսված մուտքերը կազմել են 2397.8 հազար դրամ

- գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 1248.0 հազար դրամ,

Շահումյան համայնքի 2020 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	27883.7	20789.3	74.6
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	17545.0	7771.4	44.3
Ընթացիկ դրամաշնորհներ	24250.0	15015.0	61.9
Սոցիալական նպաստներ	2000.0	1485.0	74.3
Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմ.	130.0	60.0	46.2
Տրանսպորտային սարքավորումներ	3400.0	2070.6	60.9
Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում	17250.0	1604.1	9.3
Ընդամենը	92458.7	48795.4	53.4

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ՄԱՆՈՒԿՅԱՆ